Պարույր Սևակ

Շունն ու գայլը

Ով ստեղծեց գազաններին,
Թռչողներին, վազաններին,
Ուներ-չուներ՝ ծով բարություն,
Նա շատ երկար չափեց-ձևեց
Ու Շներին մեծ ուժ տվեց,
Իսկ Գայլերին՝ հոտառություն:
Գայլը դաշտում տեսավ Էշին,
Խեղդե՛ց, հաղթե՛ց, հպարտացա՛վ:
Բայց հանդիպեց երբ Գոմեշին,
Տեսավ, որ գործը բարդացավ.
Գոմեշն այնպես պոզահարեց,
Որ խեղճ Գայլի սիրտը մարեց:
Ու մտածեց Գայլը երկար,
Որ ուժեղից ուժեղն էլ կար:
Երբ որ Գայլը եկավ ուշքի,
Ստեղծողին ասաց ուժգին.
«Հոտառության մեջ ի՞նչ կա որ...
Ո՛ւժ տուր, ո՛ւժ է ինձ հարկավոր»:
Նա էլ զարկեց իր ծնկներին,
Էլ ո՛չ չափեց, ո՛չ էլ ձևեց,
Շան ուժն առավ՝գայլին տվեց,

Հոտառությունն էլ՝ Շներին:
Տարիներ են եկել-անցել,
Գայլն իր ուժով մինչև հիմա
Էլի՛ նույն գայլն է մնացել՝
Նո՛ւյն սովածը ձմեռ-ամառ,
Նո՛ւյն որսորդի ահ ու մահով,
Այնինչ շունը իրեն համար
Ստեղծել է կյանք ապահով՝
Ոչ թե ուժով կամ բռնությամբ,
Այլ նուրբ ու սուր հոտառությամբ: